Հայոց պատմություն 2011-2012 ուստարի

9-րդ դասարանի ավարտական քննության թեստի կառուցվածքը
Թեստը բաղկացած է 32 առաջադրանքից:

Ճիշտ պատասխանի ընտրությամբ են թեստի 1-20-րդ առաջադրանքները: Դրանցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Օրինակ՝
Նշվածներից որո՞նք են Արտավազդ II-ի կառավարման տարեթվերը.
1) Ք.ա. 55-34 թթ.
2) Ք.ա. 87-55 թթ.
3) Ք.ա. 97-64 թթ.
4) Ք.ա. 80-59 թթ.

Կարճ պատասխան են պահանջում թեստի 21-30-րդ առաջադրանքները: Յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:
Օրինակ՝

Լրացնել արքայի բաց թողնված անունը.
Ք.ա. 55 թ. Հայաստանում □ահ է բարձրանում Արտավազդ II_թա□ավորը:

31-րդ առաջադրանքը կարճ պատասխաններ պահանջող առաջադրանք է: Այս առաջադրանքի առանձնահատկությունն այն է, որ մեջբերված դասագրքային տեքստում բացակայում են տարեթվեր, պատմական գործիչների անուններ, պատմական իրադարձությունների տարեթվեր, տեղանուններ և այլն, որոնք աշակերտն ինքը պիտի լրացնի: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:

32-րդը ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանք է, որի յուրաքանչյուր հարցին պետք է պատասխանել մեկ նախադասությամբ: Յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:
Ամփոփիչ վերջնական միավորը ստացվում է թեստի առաջադրանքների պատասխաններից աշակերտի վաստակած բոլոր միավորների հանրագումարից (առավելագույնը **40 միավոր**):

Միավորների բաշխումը
Ըստ առաջադրանքների տիպերի միավորները բաշխվում են հետևյալ կերպ.
ա) ընտրովի պատասխանով՝ 20 միավոր
բ) կարճ պատասխանով՝ 17 միավոր
գ) ընդարձակ պատասխանով՝ 3 միավոր

Գնահատման կարգը

Ընտրովի պատասխանով առաջադրանքների գնահատումը
Առաջադրանքներ 1-20.
Առավելագույն միավորը՝ 20
1 միավոր յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար:

Կարճ պատասխանով առաջադրանքների գնահատումը
Առաջադրանքներ 21-30.
Առավելագույն միավորը՝ 10
1 միավոր յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար:

Առաջադրանք 31.
Առավելագույն միավորը՝ 7

1 միավոր յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար:

Ընդարձակ պատասխանով առաջադրանքի գնահատումը
Առաջադրանք 32.
Առավելագույն միավորը՝ 3
1 միավոր յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար:
Այս առաջադրանքը կատարելու համար աշակերտը պետք է ընդհանուր առմամբ
լուսաբանի առաջադրանքի պահանջը: Դասագրքային բառացի ձևակերպումը պարտադիր չէ:
Աշակերտն ազատ կարող է շարադրել սեփական մտքերը:

Հանձնարարվող գրականությունը.

1. «Հայոց պատմություն», հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք, խմբագիր՝ Բ. Հարությունյան, Երևան, 2007:
2. «Հայոց պատմություն», հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք, խմբագիր՝ Բ. Հարությունյան, Երևան, 2009 :
3. «Հայոց պատմություն», Նոր շրջան, 8-րդ դասարանի դասագիրք, խմբագիր՝ Վ. Բարխուդարյան, Երևան, 2007:
4. «Հայոց պատմություն», Նորագույն շրջան, 9-րդ դասարանի դասագիրք, խմբագիր՝ Վ. Բարխուդարյան, Երևան, 2008:

Առաջադրանքների ճիշտ պատասխան է համարվում բացառապես վերոհիշյալ դասագրքերում առկա համապատասխան նյութը: